Մի խումբ ստորահոգի բախտախնդիրներ յանդգնեցին բարձրացնել քաղաքացիական կռուի արիւնաշաղախ դրօշը, ապստամբել հայ ժողովրդի ինքնորոշուած կամքի դէմ և ճեղքել հայ դեմոկրատիայի ներքին մի ուրոյն ճակատը:

Դաշնակցած բոլշևիզմն ու պանիսլամիզմը ծափ զարկեցին, որովհետև նրանց հոգեվաճառ ագէնտներին յաջողուել էր անգամ ծուռուած երկիրը, արիւնաքամ ժողովուրդը, որբերի ու գաղթականների տխուր հայրենիքը Մոսկուայի և Էրզրումի քաղաքագէտների դիւային ծրագրներին ենթարկելու փորձեր անել:

Բանուորնե՛ր, ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր:

Զրահապատ գնացքի մէջ պատսպարուած մի խումբ անորակելի ոճրագործներ՝ պարզելով «Մորհրդային Ռուսաստանի» դրօշակը՝ ամենամեծ դաւը նիւթեցին հայ ժողովրդի դէմ այն վայրկեանին, երբ նրա ֆիզիքական գոյութիւնը մահացու չափ վտանգուած է ողջ շրջապատից և երբ նրա քաղաքական բախտը որոշելու վերջին օրերն ենք ապրում: Հայ դաւաճանները իրենց խելադար արարքով օգնում են միայն արտաքին թշնամիներին— թէ՛ Հայաստանը օղակող թիւրք-թաթարական սպառազէն բանդաներին, և թէ՛ Պոլսի քաղաքագէտներին:

Բանուորնե՛ր, ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր:

Ամէն մէկիդ սրբազան պարտականութիւնն է այս ծանր օրերին ձեր ուժի ու եռանդի, շնորհքի և ընդունակութեան մաքսիմումը նուիրաբերել վտանգուած հայրենիքի պաշտպանութեան գործին: Բոլոր նրանք, որոնց մէջ առկայծում է պատասխանատուութեան վառ զգացմունքը մի բուռն դժբախտ ժողովրդի գոյութեան և նրա գերագանցօրէն արդար դատի համար, պէ՛տք է ուռքի ելնեն, որպէս ծառացած ըմբոստութիւն, և աջակցեն Հայաստանի կառավարութեան՝ բնի մէջ խեղդելու համար այն հայրենադաւ ոճրագործների ապստամբութիւնը, որոնք փորձում են փորփորել մեր դեմոկրատական իրաւակարգի հիմքերը և մտցնել բռնապետական-տեռորիստական արդէն դատապարտուած վարչաձևը:

Թո՛ղ կորչեն պետական ոճրագործները և բոլոր հակապետական տարրերը:

Կեցցէ՛ սոցիալիզմը և դեմոկրատիզմը Հայաստանում:

Հայաստանի Սոց.-Դեմ. Բանւ. Կուսակցութեան Երևանի Կոմիտէ»:

Ժողովրդին յորդոր ուղղեց և Ամենայն Հայոց Կաթուղիկոսը.

«Նոքա, որոնք վտանգ չեն տեսնում արևելքից և արևմուտքից, նոքա, որոնք չտեսնողս են ձևանում, որ մեր տան մէջ մեր դէմ դաւեր են լարում՝ պայթեցնելու անկախ Հայաստանի գաղափարը, նոքա, որոնք չեն տեսնում հայաջինջ ծրագիրների քայլ առ քայլ և հետևողական իրագործումը, գոռ՞ում են, թէ ինչ պատասխանատուութիւն է ծանրանում նոցա հանդէպ պատմութեան առաջ: Այս րոպէիս, երբ ամենքիս պարտականութիւնն է համախմբուել ո՛չ միայն հայրենիքի պահպանութեան և վերաշինութեան գործի շուրջը, այլ, նամանաւանդ, հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը պահպանելու դժուարին աշխատանքի շուրջը, ցաւալի է տեսնել ներքին երկպառակութիւնները:

Մենք, ինչպէս և մեր երջանկայիշատակ նախնիքները, որ աշխատանք ենք թափել տաճկահայ դատի համար լաւ օրերի յոյսի ակնկալութեամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ րոպէներին, և երբ վտանգուած ենք